

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ
ԸՍՏ 1891թ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ*

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՄԵՐԻ

*ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
 պատմության բաժնի մագիստրատուրայի
 2-րդ կուրսի ուսանողուհի*

Առողջապահության ոլորտը, բժշկությանը վերաբերող հարցերը հայ ժողովրդին հետաքրքրել են հին ժամանակներից: Բժշկությունը Հայաստանի մշակույթի անբաժանելի մասն է կազմում, նրա արմատները հասնում են դարերի խորքը¹:

Բնակչության բուժսպասարկումը և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման հարցերը պետության ուշադրությանն են արժանացել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց՝ 1828թ. հետո: Չնայած դրան՝ Երևանի նահանգում առողջապահությունը շարունակում էր մնալ ծայրաստիճան ցածր մակարդակի վրա թե՛ բուժիմանարկների, թե՛ բուժսպասարկման աշխատողների քանակով:

Այսպես, 1891թ. Երևանի նահանգում կար երկու հիվանդանոց, որոնցից մեկը Երևանի քաղաքային հիվանդանոցն էր, իսկ մյուսը գտնվում էր Երևանի բանտում: Գործում էին նաև հիվանդների հինգ ընդունարաններ², որոնք գտնվում էին Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի վարչական կենտրոններում՝ Իգդիրում և Բաշնորաշենում, Երևանի գավառի Ղամարլու, Էջմիածնի գավառի Աշտարակ և Նախիջևանի Ջազրի գյուղերում:

¹ Ուրարտական և ավելի վաղ շրջանի հնագիտական պեղումների արդյունքները վկայում են բժշկական արվեստի բարձր մակարդակի մասին: Հայաստանի տարածքում հայտնաբերվել են բժշկական գործիքներ հիշեցնող խեթական և ուրարտական ժամանակաշրջանների քարե և մետաղե առարկաներ (բժշկական զանազան գործիքներ, դեղատան սարք և այլն): Մասնավոր հիվանդանոցներ Հայաստանում եղել են դեռևս 3-րդ դարում: Նշենք, որ Եվրոպայում առաջին բորոտանոցները բացվել են դրանից 300 տարի հետո:

² Տե՛ս Обзор Ериванской губернии за 1891г., էջ 79-80:

1891 թ. քիչ էին ոչ միայն բժշկական հաստատությունները, այլ նաև բուժաշխատողների քանակը այն դեպքում, երբ Երևանի նահանգում տարածված էին տարափոխիկ համաճարակային հիվանդություններ, որոնք խլում էին հազարավոր մարդկային կյանքեր: Այսպես, օրինակ, 1891թ. նահանգում եղել է մալարիայի բռնկում (5986 գրանցված դեպք)¹:

Մալարիան (նախկինում նաև հայտնի էր «ճահճային տենդախտ»² անվամբ) վարակիչ հիվանդություն է: Այս հիվանդությունը եղել և մնում է մարդկության ամենավտանգավոր հիվանդություններից մեկը: 1891թ. հիվանդությունը տարածված է եղել հիմնականում Արարատյան դաշտավայրում, քանի որ Արաքս գետի շրջակայքում եղել են ճահճային գոտիներ:

Բժշկական ծառայողները հատուկ ուշադրություն էին դարձնում ծաղկախտի՝ ծաղիկ հիվանդության դեմ պայքարին: Ծաղիկը մարդկանց սուր վարակիչ վիրուսային հիվանդություն է: Բնորոշվում է բարձր վարակելիությամբ, յուրահատուկ հանգուցաբշտիկային ցանով (որը լավանալուց հետո թողնում է սպի) և կլինիկական ծանր ընթացքով: Ներկայումս պատվաստումների շնորհիվ այս հիվանդությունը չի հանդիպում:

Ծաղիկը մարդկությանը հայտնի է շատ վաղուց: XV-XVIII դարերում ծաղկի համաճարակը Եվրոպայում խլել է հազարավոր մարդկանց կյանք³: Հայաստանում ծաղիկ հիվանդության վերաբերյալ տեղեկություններ են տվել Անանիա Շիրակացին (VII դար), XII դարում Մխիթար Հերացին («Ջերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ այս հիվանդությունը դասել է «բորբոսային ջերմերի» շարքը), XIX դարում՝ բժիշկ Տիգրան Փեշտմանջյանը:

1891թ. նահանգի քաղաքային և գյուղական հիվանդանոցներում աշխատել են 17 հաստիքային ծաղկապատվաստողներ, սակայն, ըստ տեղեկությունների, ծաղկի դեմ պատվաստումներ կատարել են ոչ միայն հաստիքային պատվաստողները, այլ նաև բուժակները, տատմայրերը, կանավոր ծաղկապատվաստողները: Ընդհանուր առմամբ պատվաստվել են 16184 նորածին երեխա՝ նախորդ տարվա համեմատ 3755-ով կամ 30.2 %-ով ավելի: Պատվաստվել են նորածինների ընդհանուր թվի 66.6%-ը, մինչդեռ 1890թ՝. ընդամենը 54.7%-ը, հետևաբար նշված տարում ծաղկապատվաստումը ուներ զգալի առաջընթաց: Չնայած այս ամենին՝ եղել

¹ Տե՛ս Обзор Ериванской губернии за 1891г., էջ 81:

² Այն տարածվում է առավելապես ճահճային գոտիներում մոծակների կողմից:

³ Ծաղկի դեմ մղվող պայքարում շրջադարձային եղավ անգլիացի բժիշկ Էդվարդ Ջենների հայտնաբերած (1796) ծաղկապատվաստման մեթոդը:

են նաև անհաջող պատվաստումների 733 դեպք կամ 4.7% մահվան ելքով, նախորդ տարի այն եղել է 7.4%¹:

Այդ թվականին թեև ծաղկի դեմ պատվաստումներն ունեին զգալի դրական աճ, այնուամենայնիվ, այն չէր հասել լավագույն վիճակի: Հաշվի առնելով սա՝ բժշկական բաժանմունքը խնդրել էր Երևանի նահանգային կառավարությանը նահանգում ավելացնել ծաղկապատվաստողների հաստիքները՝ սկզբնական շրջանում յուրաքանչյուր գավառում սահմանել չորս պատվաստողներ, և պատվաստանյութերի հումքը պատվիրել Ռուսաստանից, քանի որ պատվաստման ավիշը և շիճուկը, որը բերվում էր Թիֆլիսի ծաղկապատվաստման հաստատությունից, ուներ վատ որակ, որը բացասաբար էր ազդում պատվաստումների վրա: Խնդրանքը չի մերժվում: Տարեվերջին Սամարա քաղաքից բժիշկ Շեմկևիչը դուրս էր գրել 40 ցիլինդրիկ² ծաղկահատության շիճուկ, որը հաջորդ տարի պետք է ուղարկվեր գյուղական և գավառային բժիշկներին և պատվաստողներին³:

Շուրջ կեսդարյա դադարից հետո՝ 1891թ. վերջին, Ալեքսանդրապոլի գավառում նորից բռնկվեց ժանտախտի համաճարակ, որը, ըստ պաշտոնական վարկածի, իրենց հետ Թուրքիայից բերեցին հայ գաղթականները: Հիվանդության առաջին դեպքը գրանցվեց դեկտեմբերի 1-ին գավառի Մեծ Ղարաքիլիսա (այժմ Վանաձոր) գյուղում՝ 21 հիվանդ⁴: Հաջորդ երկու ամիսների ընթացքում ժանտախտով հիվանդանալու դեպքեր գրանցվեցին Ղազանչիում՝ 10 հիվանդ, 2 մահացած⁵, և Գալլավարում՝ 14 հիվանդ⁶, իսկ հունիս ամսին նաև Ալեքսանդրապոլում՝ 6 հիվանդ⁷: ժանտախտի մասին վերջին տեղեկությունները թվագրվում են 1894թ.⁸:

Տարածված հիվանդություններից են եղել նաև աչքի հիվանդությունները (2671 դեպք), շնչառական օրգանների կատառախտը (1659), խրոնիկ բժերը (1537), աղիքային հիվանդությունները (1152), ստամոքսաաղիքային կատառը (948), ստամոքսի հիվանդությունները (946), շնչառական օրգանների հիվանդությունները (913), խոցերը (780), հոգեկան հիվանդությունները (756), ծաղկախտը (730), փայծաղի հիվանդությունները

¹ Տե՛ս Обзор Ериванской губернии за 1891г., էջ 79:

² Տե՛ս Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. 2, Եր., 1976, էջ 1475:

³ Տե՛ս Обзор Ериванской губернии за 1891г., էջ 79:

⁴ ՀԱԱ, 102, 1, 660, թ. 2:

⁵ Նույն տեղում, թ. 1:

⁶ Նույն տեղում, թ. 3:

⁷ Նայն տեղում, թ. 4:

⁸ Տե՛ս Հայրապետյան Ա., Համաճարակային հիվանդություններն Ալեքսանդրապոլի գավառում XIXդ և XXդ սկզբներին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Գյումրի, էջ 119-120:

(722), ճճվակրությունը (628), նյարդային և ջղաձգական հիվանդությունները (555), ենթամաշկային ցանցաթաղանթի բորբոքումը (522), մկանային հոդացավը (508), հոդացավերը (413), աչքի թարախային բորբաքումը (327), արյունալուծությունը (252), սակավարյունությունը և դալկախտը (201), կոտրվածքները (187), հյուծվածությունը (183), ոսկրափուտը (173), թոքերի կրուպոզային բորբոքումը (164), սիֆիլիսը (163):

Այսպիսով, նահանգի բոլոր բժշկական հաստատություններից ստացիոնար և ամբուլատոր բուժում են ստացել 27405 հիվանդներ՝ ողջ բնակչության 1/26 մասը. այն 984-ով պակաս էր նախորդ տարվա համեմատ:

Վերոբերյալ վիճակագրական տվյալներից հետևում է, որ 1891թ. Երևանի նահանգում հիվանդությունները բավականին շատ են եղել, իսկ բժիշկների թիվը՝ քիչ: Նշված տարում Երևանի նահանգի բժշկական հաստատություններում բժիշկների և բժշկական ծառայողների ընդհանուր թիվը և համեմատությունը 1890թ. հետ ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 1¹.

Բժիշկներ	1891	Հմնտ. 1890
հաստիքային բժիշկներ	16	+2
տատմայրեր	9	+1
բուժակներ	22	+3
ծաղկապատվաստողներ	17	-2
դեղագործներ	14	+5
անասնաբույժներ	2	-
կամավոր բժիշկներ	5	-2
Ընդամենը	85	+11

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ նահանգի բժշկական հաստատություններում աշխատել են ընդհանուր առմամբ 85 բժշկական ծառայողներ, որը նախորդ տարվա համեմատ ավելի էր 11-ով: Բուժական սպասարկման կազմում եղել են հաստիքային 16 բժիշկներ. նրանց թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել են 2-ով: Միջանկյալ նշենք, որ ըստ որոշ աղբյուրների՝ 19-րդ դարի երկրորդ կեսից Հայաստանում գործունեություն ծավալեցին Ռուսաստանում մասնագիտական կրթություն ստացած զգալի թվով հայ բժիշկներ: Հնարավորություն չունենալով լուրջ փոփոխություններ մտցնել ժողովրդի առողջության պահպանման գործում, չկարողանալով արմատապես բարելավել բուժսպասարկումը՝ նրանք իրենց գործունեությունը

¹ Հաշվարկը կատարվել է ըստ Обзор Ериванской губернии за 1891г. Էջ 78 տվյալների:

հիմնականում ուղղեցին բնակչությանը լուսավորելուն, սանիտարական և մշակութային մակարդակը բարձրացնելուն: Երևանի բժշկության բնագավառում հիշյալ ժամանակաշրջանում աչքի են ընկել հայտնի բժիշկներ Վերգինե Խորասանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Արմենակ Վարդանյանը¹ :

1891թ. նահանգի բուժսպասարկման կազմում քանակապես գերակշռում էին բուժակները (նրանց թիվը 22 էր, նախորդ տարվա համեմատ 3-ով ավելի) և ծաղկապատվաստողները (նրանք 17-ն էին, նախորդ տարվա համեմատ պակաս 2-ով): Կային նաև 14 դեղագործներ, որոնց թիվը ավելացել էր 5-ով նախորդ տարվա համեմատ, և 5 կամավոր բժիշկներ. 1890թ. նրանց թիվը եղել է 7: Բժշկական կոչում ունեցող մեկ անձի ընկնում էր 8250 բնակիչ՝ երկու սեռերի հաշվով:

Բժշկական ծառայողների գործունեությունը սահմանափակվում էր դատական բժշկության և բուժական ոստիկանական պարտականությունները կատարելով, ինչպես նաև գյուղական բնակչությանը բուժօգնություն ցույց տալով:

Երևանի նահանգում 1891թ. գործում էր 12 դեղատուն, որոնցից 7-ը մասնավոր էր, իսկ 5-ը՝ պետական: Մասնավոր դեղատներից չորսը գտնվում էին տարբեր քաղաքներում. Երկուսը՝ Երևանում էր, մեկը՝ Նախիջևանում, մյուսը՝ Ալեքսանդրապոլում: Մնացած երեք դեղատները գործում էին գյուղերում՝ Նոր Բայազետում, Էջմիածինի գավառի Վաղարշապատ, Սուրմալուի գավառի Իգդիր գյուղերում: Պետական դեղատները գործում էին գյուղական հիվանդների ընդունարաններում: Բացի դրանից՝ բնակիչները իրավունք ունեին օգտվելու նաև Օրդուբադի զինվորական հիվանդանոցի դեղատնից, այնպես որ բնակչության պահանջարկը բավարարելու համար կար 13 դեղատուն՝ երկուսով ավելի նախորդ տարվա համեմատ: Մեկ դեղատանը ընկնում էր 53948 բնակիչ, իսկ 1890թ.՝ 62776 բնակիչ²:

Չնայած նահանգի բնակչության ծանր կացությանը՝ բժիշկների դուրս գրած դեղատոմսերով նրանք ոչ բոլոր դեղատներից կարող էին ձեռք բերել անվճար դեղորայք: Բնակիչը առանց գումարի դեղորայք կարող էր ստանալ միայն պետական դեղատներից: Ուսումնասիրվող տարում բնակիչներին տրվել է 16297 անվճար դեղատոմս:

Դեղատոմսերով և նրանց կրկնումներով³ դեղերի վաճառքը մյուս դեղատներում կատարվել է վճարովի հիմունքներով, ընդ որում մասնավոր դեղատներից՝ 16906, Օրդուբադի զինվորական հիվանդանոցի դեղատնից՝

¹ <http://yhm.am/archives/8768>:

² Տե՛ս Օбзор Ериванской губернии за 1891г. էջ 79:

³ Տե՛ս Օбзор Ериванской губернии за 1891г. էջ 80:

327 վճարովի դեղատոմս: Այսպիսով, 1891թ. ընդհանուր առմամբ, դուրս է գրվել 33530 դեղատոմս (1890թ. համեմատ ավել էր 1789-ով), որից 17233 վճարովի և 16297 անվճար դեղատոմս: Յուրաքանչյուր դեղատանը բաժին էր ընկնում միջին հաշվով 2579 դեղատոմս, մինչդեռ նախորդ տարի այդ թիվը եղել է 2886:

Դեղորայքի վաճառքից դեղատները ստացել են մեծ եկամուտ, ընդ որում դեղերը վաճառել են ոչ միայն դեղատոմսերով, այլ նաև երբեմն էլ առանց դրանց: Ըստ դեղատոմսի վաճառված դեղորայքից մասնավոր դեղատներում ստացվել էր 10735,96 ռուբլի, իսկ առանց դեղատոմսի վաճառված դեղորայքից՝ 5101,78 ռուբլի, ընդհանուր հաշվով ստացվել է 15837,74 ռուբլի՝ 1890թ. համեմատ 255,48 ռուբլիով պակաս: Նշված գումարը յուրաքանչյուր դեղատանը բերել է 1218,29 ռուբլի շահույթ՝ 1080,74 ռուբլիով պակաս նախորդ տարվա համեմատ:

Այսպիսով, 1891թ. նահանգում յուրաքանչյուր բնակիչ դեղորայք գնելու համար ծախսել է միջինը 2,3 կոպեկ, այնքան, որքան եղել է նաև նախորդ տարի:

Երևան քաղաքում բացի հիվանդանոցներից գործում էր նաև ամբուլատորիա, որի անձնակազմը կազմված էր տնօրենից, նրա օգնականից, 4 խորհրդատու բժիշկներից, բուժակներից, տեսուչներից, մանկաբարձուհուց, պահակներից:

Բուժարանի, ինչպես նաև նահանգի մնացած բոլոր բժշկական հաստատությունների ծախսերը հոգում էր Երևանի նահանգային կառավարությունը: Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է, թե կառավարությունը որքան գումար է հատկացրել բժշկական հաստատություններին, որքան է ծախսվել և որքան է մնացորդը եղել:

Աղյուսակ 2¹.

Հաստատություններ	Հատկացված գումարը	Ծախսված գումարը	Մնացորդ
Երևանի քաղաքային բուժարան	2813 ռուբլի	2813 ռուբլի	-
Գյուղական ընդունարաններ	22025 ռ.	17286 ռ. 83 կ.	4738 ռ. 17 կ.
Երևանում բժշկական անձնակազմի համար	1660 ռ.	1660 ռ.	-
Բժշկական բաժանմունքի այլ	24609 ռ. 31 կ.	24148 ռ. 53 կ.	460 ռ. 78 կ.

¹ Աղյուսակը կազմվել և հաշվարկը կատարվել է ըստ Обзор Ериванской губернии за 1891г. Էջ 81 տվյալների:

ծախսեր			
Ծաղկապատվաստումների համար	600 ռ.	600 ռ.	-
Անասնաբույժների համար	1960 ռ.	1960 ռ.	-
Ընդհանուր բոլոր բժշկական բաժիններ	55167 ռ. 31 կ.	45908 ռ. 36 կ.	9258 ռ. 95 կ.

Ըստ աղյուսակ 2-ի տվյալների՝ Երևանի քաղաքային բուժարանը պահելու համար ծախսվել է 2813 ռուբլի, որը օգտագործվել է տարբեր նպատակներով. 1768 ռուբլին տրվել է ծառայողների վարձավճար, 500 ռուբլին՝ շենքի վարձակալության, ջեռուցման, լուսավորության համար, 40ռ.՝ ջրի և սպիտակեղենի լվացքի համար, 450 ռ.՝ դեղամիջոցների, վիրակապման միջոցների, վիրահատական սեղանի, նոր գործիքների գնման, հին գործիքների նորոգման և փոստի ծախսերի համար, 85 ռ.՝ գրասենյակային այլ ծախսերի համար:

Բուժարանը որոշ եկամուտ էր ստացել նաև հիվանդների կատարած այցերից, քանի որ ոչ բոլոր այցերն էին անվճար:

1891թ. Երևանի քաղաքային ամբուլատորիա այցելել են 1686 հիվանդներ, որոնց կատարած 4505 այցերից 2751-ը եղել են անվճար, իսկ 1754-ը՝ վճարովի, ընդ որում մեկ այցի համար վճարվել է 40 կոպեկ: Այսպիսով, վճարովի այցերից ստացվել է 701 ռուբլի 60 կոպեկ:

Նահանգային կառավարությունը գյուղական 5 հիվանդների ընդունարանների ծախսերի համար հատկացրել էր 22025ռ., որից ծախսվել էր 17286ռ. 83կ., իսկ մնացորդը կազմել էր 4738ռ. 17կ.: Մնացորդային այս գումարին պետք է ավելացնել նաև 1500 ռ., որը հատկացված է եղել Աշտարակի և Ջազրիի նորաբաց ընդունարաններին, որոնք, սակայն, չէին բացվել:

Տասը ծաղկապատվաստողների համար հատկացվել էր 600 ռ., 2 գերհաստիքային անասնաբույժների համար՝ 1960ռ.: Նշված գումարները ևս փոխառված էին պետական գանձարանից:

Երևանում բժշկական անձնակազմին պահելու համար հատկացվել էր 1660 ռ. քաղաքային միջոցներից, որն ամբողջությամբ ծախսվել էր: Եվ վերջապես, բժշկական բաժանմունքի անձնակազմի, գավառային բժիշկների, անասնաբույժների, տատմայրերի, բուժակների, տնտեսական և գրասենյակային կարիքների բավարարման համար հատկացվել էր 24609ռ. 31կ., որից ծախսվել էր 24148ռ. 53 կ., մնացորդը կազմել էր 460ռ. 78կ.:

Ընդհանուր առմամբ նահանգի բժշկական բաժինների ծախսերի համար հատկացվել էր 55167ռ. 31 կ., որը 14657ռ. 31կ.-ով ավելի էր 1890թ. համեմատ: Նշված գումարից ծախսվել էր 45908 ռ. 36կ.՝ 7310ռ. 16կ. –ով ավել նախորդ տարվա համեմատ: Իսկ մնացորդային գումարը եղել է 9258 ռ. 95 կ.՝ 7347 ռ. 15 կ.-ով ավելի նախորդ տարվա համեմատ:

Այսպիսով, նահանգում բժշկական բաժինների ծախսերի համար հատկացված գումարից յուրաքանչյուր բնակչի բաժին էր ընկնում 6,5 կոպեկ, որը 0.9 կոպեկով ավելի էր 1890թ. համեմատ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ 19-րդ դարի 90-ականների սկզբներին և մասնավորապես 1891թ. Երևանի նահանգի առողջապահական ոլորտը թույլ էր զարգացած, չկային բավարար քանակությամբ հիվանդանոցներ, գործող հիվանդանոցներն էլ կենտրոնացված էին քաղաքում և մի քանի գյուղերում, որի հետևանքով էլ հիվանդները անհրաժեշտ բուժօգնություն չէին ստանում: Նահանգում քիչ են եղել նաև բժիշկները, դեղատները, բնակիչն անհրաժեշտ դեղորայք ստացել է հիմնականում վճարովի հիմունքներով:

Քանալի բառեր՝ առողջապահություն, Երևանի նահանգ, բժշկական հաստատություն, բժիշկ, հիվանդություն, հիվանդանոց:

Օգտագործված գրականություն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հտ.2,Եր., 1976, 1580 էջ:
2. Հայրապետյան Ա., Համաճարակային հիվանդություններն Ալեքսանդրապոլի գավառում XIXդ և XXդ սկզբներին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Գյումրի, 320 էջ:
3. ՀԱԱ, 102, 1, 660, թ. 1, 2, 3, 4:
4. Обзор Ериванской губернии за 1891г.
5. [http://yhm.am/archives/8768:](http://yhm.am/archives/8768)

HEALTHCARE IN YEREVAN PROVINCE ACCORDING TO STATISTICAL DATA OF 1891

HARUTYUNYAN HAMLET

Doctor of Historical Sciences, Professor

Head of the Chair of History, GSU

SAGHATELYAN MERI

2nd year MA student of the Department of History

Faculty of Humanities, GSU

In the early 90s of the 19th century, and particularly in 1891, the healthcare system of Yerevan province was not developed, the hospitals were not enough, and the existing hospitals were concentrated in the city and in several villages, in the result of which the patients could not receive the necessary medical care.

At that time, there was a shortage of not only medical institutions, but also the number of healthcare providers, and this was the time when epidemics was spreading in the Province of Yerevan, which took thousands of human lives. Among the most common diseases were malaria, smallpox, plague, eye diseases, gastrointestinal diseases, respiratory diseases, ulcers, syphilis, etc.

Key words: *healthcare, Yerevan province, medical institution, doctor, disease, hospital.*

ЗДРАВООХРАНЕНИЕ В ЕРЕВАНСКОЙ ГУБЕРНИИ СОГЛАСНО СТАТИСТИЧЕСКИМ ДАННЫМ 1891 Г.

АРУТЮНЯН ГАМЛЕТ

Доктор исторических наук, профессор

Зав. кафедрой истории ГГУ

САГАТЕЛЯН МЕРИ

*Студентка 2-го курса магистратуры отделения истории
факультета гуманитарных специальностей ГГУ*

В начале 90-х гг. 19-го века, в частности в 1891 г., система здравоохранения Эриванской губернии не была развитой - не существовало достаточного количества больниц, а действующие больницы были сосредоточены только в городе и нескольких селах. Вследствие сложившейся ситуации больные не получали необходимой медицинской помощи. В указанное время наблюдался дефицит не только медицинских учреждений, но и медработников, и это в том случае, когда в Эриванской губернии были частым явлением эпидемии, уносившие жизни тысячи людей. Среди распространенных болезней следует отметить такие, как малярия, оспа, чума, глазные болезни, желудочно-кишечные заболевания, болезни дыхательных путей, язвы, сифилис и др.

Ключевые слова: *здравоохранение, Эриванская губерния, медицинское учреждение, врач, болезнь, больница.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.03.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 17.04.2019թ.: